

կան պատին իւրեանց՝ դիւանի եւ գրագմականն»<sup>(89)</sup>։ Իսկ այս մասին ամէն տարակոյս փարատելու համար հոս մէջ կը բերեմ Առաքել Դաւրիթեցիի վկայութիւնը 1620ական թուականներէն, որուն համաձայն Մովսէս վ. Տաթևացի իբր բուն բողոքի նշան «զիւր փիւրնն եւ զգաւազանն եւ զխալիչէն (գորգը) առաքեաց առ Մէլքիսէթ կաթուղիկոս ասելով, որովհետեւ ոչ կամիս գքարողութիւնն մեր, ահաւարիկ ա՛ւքեզ զիշխանութիւնն մեր»<sup>(90)</sup>։

Այս մասը փակելէ առաջ՝ հոս կը բերեմ Սիմէոն Դպիր Լեհացիի մէկ վկայութիւնը (1621-1635)։ Պապին Հոռմի Ս. Պետրոսէն մեկնիլը նկարագրելով կ'ըսէ. «սեղանին առջեւ ապրըշեմէ (մետաքսէ) մեծ տիվան խալի մը սիւսած էր, մեծաղին»<sup>(91)</sup>։ Տիվան, պարսկ. տիլվան, կը նշանակէ ատեան, արդէն հնուց կը գործածուէր Մերձ. Արեւելքի մէջ։ Դարձեալ նոյն ուղեգիր դպիրը կը յիշէ սէնատախալի», որ իբր մէկ բառ նկատուած է Հ. Ն. Ակիմեանէ։ Սխալ է ու պէտք է ըլլայ սէնատախալի, որ հաւանաբար սէնտէ բառէն ծագած է եւ արաբերէն երկրպագութիւն կը նշանակէ, ուրեմն սէնտէ կամ սէնատախալի կը նշանակէ երկրպագութեան կամ աղօթքի գորգ։ Այդ անունը առհասարակ կը տրուի հիմա 3×5 ոտքէն մեծ կամ 4×7 փոքր գորգերուն։ Իսկ 3×5 ոտք գորգերուն այժմ կ'ըսեն նամազի, այսինքն աղօթքի գորգ։ Սակայն աղօթքի բուն գորգերը ընդհանրապէս զծածեւով խորան մը կը ներկայացնեն։

Նոր Զուլայի արժէքաւոր դիւանին մէջ կան վաւերաթուղթեր՝ որոնք կը խօսին եկեղեցական գորգերու մասին։ 1739ին գրուած նամակ մը Երնջակի Ս. Կարապետէն Նոր Զուլայի աթոռակալ Յակոբ վարդապետին, նամակագիր Եսայի վարդապետ կ'իմացնէ ստացած ըլլալը բազմաթիւ իրերու կարգին նաեւ «Դ(4) Սկու խալիչա..... մէկ քարոզի խալիչայ», այսինքն չորս հատ «սկիհի գորգ եւ մէկ հատ քարոզի գորգ»<sup>(92)</sup>, որ մեզի կը յիշեցնէ Դաւրիթեցւոյ այն վկայու-

(89) Անդ, էջ 308։

(90) Պատ.։ էջմիածին, 1896, էջ 293։

(91) Հանդ. Ամս. 1933, էջ 605։ Տիվան վաղուց մուսուլմաններէն է մեր լեզուին մէջ դիւան ձեւով, սակայն չիւրացուած տիվան ձեւով տես նոյնիսկ 1314էն յիշատակարանի մը մէջ, «արբունի տիվան պաշի»։ (Սիսուան, էջ 520)։

(92) Հոս իբր հետաքրքրական վաւերաթուղթ կը ներկայացնեմ ամբողջութիւնը այս նամակին, որուն խորագիրն է «Երնջակի եւ Մեծապատիւ Աթոռակալ եղբոր Յակոբ վ(ա)րդ(ա)յ(ե)տին ողջոյն ընծայեք»։ (Քիւրտեան լուսանկար, Մարտ V Նոր Զուլայի դիւան)։

«Ի տէր Եսայի վ(ա)րդ(ա)յ(ե)տ Սպասաւոր եւ աւելածու մենաստանի ս(ր)ր(ո)յ Տանն Կարապետին եւ Մկրտչին Քի.։ Յորմէ ողջոյն կենարարին մերոյ, աւանդեալն։ եւ սիրով սր. հոգւոյն. խանդաղակաթ եւ կաթոլին բաղձաւոր, ի բացուստ իբր առնթեր մատուցանեմ եւ ընծայեմ վերոյ գրեալ հոգեպատուած բարունիացող...։ Եւ յողջանութ տենչմամբ հարցանեմ հիկէնն, եթէ զիարդ եւ կամ ս(ր)պի(տի) կենօք փայլիք նայմն վատուէր ամանկոյս զոր տէրն հանուրց պահեցէ տեսող թարց նեղութե(ան)ց եւ վշտուց։ Իսկ եթէ ընծայրագունեղ եւ մեծակայ իշխանութե(ան) ձերում խոնարհիք յինէն տեղեկանալ ահա ձերին մաքուր եւ սրբարար աղօթիւքն կեամ կենդ(ա)նի եւ աղօթող վ(ա)ս(ն) կենաց սիրելիացող։ Նաեւ յայտարարութիւն(ւն) լիցի ձեր հրամանացն եւ ահա մեր սիրելի որդի եւ ձեր հրամանոց ծառայ Յոհան վ(ա)րդ(ա)յ(ե)տն առ մեզ փամանեաց որ էր